

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ջենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетыан** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT**

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.).....	8
Эдик Минасян – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).....	32
Edik Minasyan – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).	33
Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ).....	34
Артак Мовсисян – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА).....	40
Artak Movsisyan – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO).....	40
Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅԹԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՐՈՍՏԵՆՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ».....	41
Микаэл Малхасян – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.	47
Mikayel Malkhasyan – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY’S “GEOGRAPHY”.	47
Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՍԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱԹԻՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	49
Эдгар Варшамян – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.	60
Edgar Varshamyan – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.	61
Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ	62
Аргисhti Варданян – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.	68
Argishti Vardanyan – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.	68
Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱՎՅՍԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ.....	70
Арман Егиазарян – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.	79
Arman Yeghiazaryan – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.	79
Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ԿԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏԿԱՏԻՏՐՈՍՆԵՐԸ	81
Арарат Степанян – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.....	86
Ararat Stepanyan – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.....	86

Սեյրան Չաքարյան – ԱՉԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԵՎ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ).....	88
Сейран Закарян – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).....	97
Seyran Zakaryan – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSİ).....	98
Սարգիս Բալդարյան – ԿՈՍԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....	99
Саркис Балдарян – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.....	106
Sargis Baldaryan – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.	106
Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐԿԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ).....	108
Арарат Акопян – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).....	117
Ararat Hakobyan – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).....	117
Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՍԱԹՅՈՒՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	118
Нелли Минасян – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.....	123
Nelli Minasyan – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.....	123
Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	124
Сурен Аветисян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	131
Suren Avetisyan – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.....	131
Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԱԿԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	132
Арнак Саргсян – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).....	139
Arnak Sargsyan – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).....	139
Գայանե Թովմասյան, Ռուբիկ Թովմասյան – ՉՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ).....	140
Гаяне Товмасян, Рубик Товмасян – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.....	149

Gayane Tovmasyan, Rubik Tovmasyan – FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA. 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՆՆԱ-ՑԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетейан – ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА. 156

Arshaluys Teteyan – RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT. 156

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՎԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀԱՎԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱԿՈՐ ԱՐՔԵՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Напетян – АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ). 162

Rafik Nahapetyan – ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES). 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян – БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ. 174

Christina Ayvazyan – CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES. 175

ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, Ավետիս Գրիգորյան – ՄԱՔՐԱՎԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян, Аветис Григорян – ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.) 181

Gegham Asatryan, Avetis Grigoryan – THE CROSSLINES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES). 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵՎԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян – ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ. 188

Monte Matevosyan – THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH. 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱԴԵՄԻ Հ^մ 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ԾՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян – РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА. 199

Shushanik Hambaryan – № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD. 199

ՍՓՅՈՒՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրածին Վարդանյան – ՍՓՅՈՒՌԻ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՐԸ.....	202
<i>Грацин Варданян – ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.....</i>	207
<i>Hratsin Vardanyan – TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.....</i>	208
Ալիկ Ղարիբյան, Գայանե Գալստյան – ՀՅԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՍԿԶԲԱԿՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ.....	209
<i>Алик Гарибян, Гаяне Галстян – НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТИОН В США.....</i>	214
<i>Alik Gharibyan, Gayane Galstyan – THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.....</i>	215
Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	216
<i>Эдгар Ованесян – СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.....</i>	225
<i>Edgar Hovhannisyán – THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.....</i>	225
Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.....	226
<i>Мариам Акопян – ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.....</i>	231
<i>Mariam Hakobyan – THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.....</i>	231
Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՐԸ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՄԱԶԵՎ ՍՈՂԵԼԸ.....	232
<i>Нарине Нушерванян – ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ “ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА”.....</i>	240
<i>Narine Nushervanyan – "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.....</i>	241
Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԻ ԼՈՐԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ.....	242
<i>Геворг Гукасян – О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.....</i>	250
<i>Gevorg Ghukasyan – ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.....</i>	251

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, Կարեն Բայրամյան – ՆՈՐԱՀԱՅՑ ԿԱԿԵՐԱԳՐԵՐ ԼԱՁԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ.....	252
---	-----

Այկազ Օգանեսյան, Կարեն Բայրամյան – НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ. 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan – NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE. 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 262

Օւիւկ Գրիգորյան, Այկ Մխոյան – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО. 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan – FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO. 274

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՅԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԵՆՆԻՇՆԵՐ) 275

Արա Օգանեսյան – УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”. 281

Ara Hovhannisyan – EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”. 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX-НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Չոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻՉԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՐ ՀՐԱՏ., 2019, 398 ԷԶ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՄՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ / ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ /, Ե., ԵՊՐ ՀՐԱՏ., 2020, 212 ԷԶ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Սարգիս Բաղարյան

ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ¹

Հիմնաբառեր. Կոստանդ Ջուղայեցի, վաճառականական ձեռնարկ, Նոր Ջուղա, շրջանառության տեսություն, առևտրական ցանց, Եդիա Կարնեցի, Ղուկաս Վանանդեցի, Ամստերդամ:

ՍՈՒՏՔ

1720 թ. ապրիլի 30-ին հայ վաճառական Եդիա Կարնեցին, որն այդ ժամանակ արդեն աշխատանքի էր անցել ֆրանսիական Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղում, ձեռնամուխ է լինում իր գրադարանի ցուցակագրմանը ու կազմում իր գրքերի ամբողջական ցուցակը: Այդ ցանկի տասներորդ համարի ներքո Եդիան արձանագրել է. «Ունեյի Գիրք արհեստի չափոց և կշռոց բոլոր աշխարհի. համար Ժ»²: Կասկածից դուրս է, որ նա նկատի է ունեցել Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը, որը հրատարակվել էր Ամստերդամում մոտ երկու տասնամյակ առաջ՝ 1699 թվ.³: Ղուկաս Վանանդեցու այս առևտրական ուղեցույցը մեծապես հիմնված էր մեկ այլ հայ հեղինակի՝ Կոստանդ Ջուղայեցու ավելի վաղ շարադրված դասագրքի վրա: Եդիա Կարնեցին մեկն էր այն հազարավոր հայ վաճառականներից, որոնք, հատելով արևելքի ու արևմուտքի առևտրական ուղիները, կարիք ունեին վաճառականական գործի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության: Հենց այդ անհրաժեշտությունն առաջ էր բերում վաճառականական գրականության պահանջարկ, որի օրինակները թեև երբևէ չուսումնասիրված, սակայն քիչ չեն վաղ արդի հայոց պատմության մեջ:

Եդիա Կարնեցու գրադարանում առևտրական դասագրքի առկայությունը մղում է մտածելու հարցերի այնպիսի խմբի մասին, որոնց առանցքում առևտրական գրականության շրջանառությունն է հայ վաճառականների միջավայրում. ի՞նչ գրքերից էին օգտվում XVII-XVIII դդ. համաշխարհային առևտրում ներգրավված հայ վաճառականները, ի՞նչ դեր էին կատարում առևտրական երկերը նրանց գործունեության ասպարեզում և, ի վերջո, ինչպե՞ս էին դրանք տարածվում Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում⁴: Այս հարցերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հարստացնելու մեր պատկերացումները ջուղայեցի վաճառականների մասին, ավելի որոշակի՝ թույլ կտա առաջին անգամ գնահատել հայկական առևտրական ձեռնարկ-դասագրքերի դերակատարությունը տեղեկատվության շրջանառության գործում:

Վաղ արդի դարաշրջանի⁵ հայկական վաճառականական գրականության ամենանշանավոր նմուշները Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկ-դասագրքերն են՝ «Աշխարհաժողով» և «Դռներն

* Հոդվածը ներկայացվել է 16.03.2020 թ., գրախոսվել՝ 19.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:

¹ Այս հոդվածի նախնական տարբերակը ներկայացվել է Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի 17-րդ ասպիրանտական հայագիտական գիտաժողովում (15 փետրվարի, 2019 թ.) «An Armenian Trade Manual in Circulation: Constant of Julfa, His Compendium and the Dissemination of Commercial Information in the Julfan Trade Network» խորագրով:

² Չուգասյան Բ., Եդիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 1, էջ 70: Այդ գրքերի ցուցակը վերցված է Եդիա Կարնեցու դիվանից, որը պահպանվել է Ռուսաստանի արտաքին բաղաբաղականության արխիվում: XVIII դ. առաջին կեսի վերաբերյալ հարուստ նյութեր պարունակող այս դիվանը դեռ սպասում է մանրամասն հետազոտության (դիվանի գիտական նկարագրությունը տե՛ս Դանեղյան Լ., Բացառիկ ժամանակություն (Դիվան Եդիա Մուշեղյանի. գիտական նկարագրություն), «Մերձավոր Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հատ. XX, Ե., 2001, էջ 246-264):

³ Տե՛ս Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699:

⁴ Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի վերաբերյալ լավագույն ուսումնասիրությունը, հիմնված հայկական առևտրական փաստաթղթերի ընթերցման վրա, տե՛ս Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011.

⁵ Վաղ արդի հայոց պատմության՝ որպես առանձին պատմափուլի յուրահատկությունների դիպուկ վերհանման համար տե՛ս Aslanian S., Port Cities and Printers: Reflections on Early Modern Global Armenian Print Culture, «Book

ռադամին» խորագրերով, որոնք շարադրվել են Նոր Ջուղայում 1687 թ.: Հեղինակը հայտնի է իր առևտրական դասընթացներով, որոնք նա վարում էր Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում առևտրի մեջ մասնագիտացող ջուղայեցի երիտասարդների համար: Տրամաբանելի է, որ Կոստանդ Ջուղայեցու երկերի շարադրման նպատակը դրանց գործածությունն էր իր առևտրական դասընթացի շրջանակներում: Այնուհանդերձ, հայ վաճառականների շրջանում մասնագիտական գրականության պահանջարկը Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների համար ապահովեց գործածության շատ ավելի լայն դաշտ, քան հեղինակի սկզբնական նպատակադրումն էր: Նրա ձեռնարկ-դասագրքերը ջուղայեցի վաճառականների համար դարձան առևտրական արժեքավոր ուղեցույցներ, որոնք ուղեկցում էին նրանց իրենց գործնական ուղևորությունների ընթացքում: Փաստորեն, Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները ոչ միայն գործածվում էին Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում որպես դասագրքեր, այլև հայ վաճառականների կողմից տարվում էին այն բնակավայրերը, ուր նրանք այցելում էին գործնական նկատառումներով: Այլ կերպ ասած՝ այս ձեռնարկ-դասագրքերը գործածության մեջ էին ոչ միայն ջուղայեցի վաճառականների համաշխարհային առևտրական ցանցի կենտրոնում՝ Նոր Ջուղայում, այլև այդ ցանցի մեջ մտնող բազմաթիվ բնակավայրերում, որոնք սփռված էին Եվրոպայի ու Ասիայի տարբեր մասերում:

Հոդվածի գլխավոր նպատակն է ուսումնասիրել Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկ-դասագրքերի շրջանառությունը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում՝ հիմնվելով Կլոդ Մարկովիցի առաջ քաշած «շրջանառության տեսության»¹ վրա: Երբևէ համակողմանիորեն չուսումնասիրված այս հարցի վերաբերյալ արժեքավոր տվյալներ կարելի է ստանալ երկու ճանապարհով: Առաջին՝ ձեռնարկների ձեռագրերում վաճառականները թողել են հիշատակարաններ՝ պատմելով իրենց ուղևորությունների ու, դրանով իսկ նաև, ձեռնարկների շրջանառության մասին և երկրորդ՝ ձեռնարկների ձեռագրերը հասել են Եվրոպայի ու Ասիայի տարբեր բնակավայրեր՝ հայ գրիչների ու հեղինակների համար ծառայելով որպես ընդօրինակման աղբյուր: Առաջին անգամ մեկտեղելով հարցի վերաբերյալ մեր ունեցած տվյալները՝ հնարավորություն կունենանք որոշակի պատկերացում կազմելու Կոստանդ Ջուղայեցու դասագրքերի շրջանառության մասին, ընդ որում՝ առևտրական տեղեկատվության փոխանցման ավելի լայն համապատկերի վրա:

ՎԱՃԱՌՎԱՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԶԵՌԱՐԿՆԵՐԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասագրքերի բնագրերը մեզ են հասել վեց ձեռագրերում, որոնցից երեքը պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, երկուսը՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում, ևս մեկն՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Այս ձեռագրերից երկուսը հարուստ են դրանց երբեմնի օգտագործողների՝ հայ վաճառականների թողած հիշատակարաններով: Երբեմն օրագրական գրառումների տպավորություն գործող այս հիշատակարանները, որոնք թողնվել են ձեռագրերի դատարկ էջերին, վերաբերում են ինչպես դրանց հեղինակների ընտանեկան կյանքին, այնպես էլ առևտրական-գործնական ուղևորություններին:

Հիշատակարանների հարստության առումով Կոստանդ Ջուղայեցու երկերի գրչագիր օրինակներից առաջին հերթին առանձնանում է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի թիվ 64 ձեռագիրը: Ավետը, ում ըստ երևույթին սկզբնապես պատկանել է ձեռագիրը, թողել է չորս հիշատակարան իր առևտրական ուղևորությունների մասին: Դրանցից մեկը չի նշում ուղևորության նպատակակետը², մինչդեռ մյուս երեք հիշատակարաններն ամփոփում են Ավետի անցած երթուղու մասին ամբողջական տվյալներ: Այսպես՝ 1697 թ. Ավետը ճանապարհ է ընկել Սպահանից

History”, № 17, 2014, pp. 53-58: Համաշխարհային պատմագիտության մեջ ընդունելություն գտած «վաղ արդի դարաշրջան» եպրը հայագիտական հետազոտություններում շրջանառելու անհրաժեշտության, ինչպես և հարցի շուրջ առկա տեսակետների ամփոփ ներկայացման համար տե՛ս մեր աշխատության «Վաղ արդի դարաշրջանն ու հայոց պատմությունը» ներածական մասը՝ Բաղդադյան Ս., Նոր Ջուղայից Երևան ու Երպրում. ճիպվիտ քարոզիչները հայկական բնակավայրերում XVII-XVIII դդ., Ե., 2018, էջ 9-23:

¹ St’u Markovits C., *The Global World of Indian Merchants, 1750-1947: Traders of Sind from Bukhara to Panama*, Cambridge, 2000, p. 25.

² St’u Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 25 1բ: Ձեռագիրը մեզ մատչելի դարձնելու համար շնորհակալություն ենք հայտնում Լուս Անջելեսի Կայիֆոնիայի համալսարանի պրոֆեսոր Սեպուհ Ալլայանին:

Սուրաթ՝ Յնդկաստանի առևտրական կենտրոններից մեկը. «Աստուծով փոքր թիւն ձք Նադար ժա-ումն (1697) արեամբ գնել՝ Քրիստոսի ծառայ Աւետս Ըսպահանայ վերկացի դապի Սուրաթն: Տէր Աստուած բարի ճանապահր տայ, որ բարով սալամաթ գնանք գուք»¹: Մի քանի տարի անց՝ 1701 թ., Ավետն իր գործընկեր Յովհանի հետ առևտրական գործունեությունը շարունակել է «Ֆռանգըստան»-ում, այն է՝ Եվրոպայում, ու այդ մասին Նորից հիշատակարան է թողել Կոստանդ Չուղայեցու դասագրքի դատարկ էջերին. «Աստուծով թիվն ոճծ (1701) դամար ժգ Յովանն օրն ուրբաթ գնացին դապի և Աւետնն Ֆռանգըստան: Աստուած ուրէնց բան, աչն աջողի: Աստուած յերկար ումբր տայ և ամենեցուն: Ամէն»²: 1705 թ. Նույն վաճառականի թողած մեկ այլ հիշատակարանում էլ պատմվում է դեպի Մաշհադ՝ հյուսիսարևելյան Իրան ուղևորվելու մասին³: Ավելի քան երկու տասնամյակ անց՝ 1729 թ., ձեռագրի հետագա օգտագործողներից Վարդանը ևս թողել է համանման հիշատակարան՝ չնշելով, սակայն, իր ուղևորության վերջնակետը. «Աստուծով փոքր թիվն ճժղ (1729) շբ(ա)թ իբ-ումն ես՝ Վարդանս, Ըսպայհանայ վերկացի: Ամէն»⁴:

Այս կարգի հիշատակարաններով հարուստ է նաև Կոստանդ Չուղայեցու երկերի ընդօրինակություններից մյուսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 8443 ձեռագիրը: Այն ընդօրինակվել է 1687 թ., ինչից մի քանի տարի հետո արդեն ձեռագիրը հայտնվում է իրանական Շիրազ քաղաքում, ինչպես երևում է Սաֆարի հիշատակարանում. «Ի թուականիս հայոց հազար հարիւրորդի քառասուն և մէկն աւելի (1692)՝ ի համսիանն համիրայ, որ էր օր երրորդի, ի քաղաքին, որ և Շիրազ կոչի, գրեցի գիրս վասն յիշման ժամանակի անուամբս Սաֆար, որ եմ որդի Սէթի»⁵: Այս ձեռագրի մյուս հիշատակարաններն ավելի մեծ հետաքրքրություն են առաջ բերում: Այսպես՝ ձեռագրի պահպանակի հայերեն գրություններն ընդմիջվում են վրացերեն ու վրացատառ հայերեն հիշատակարաններով⁶: Վրացատառ հայերեն հիշատակարանում հեղինակը հակիրճ արձանագրում է իր՝ Թիֆլիս ժամանելը, իսկ անմիջապես դրա ներքևում փոքր-ինչ ավելի բաց թանաքով գրի առնված վրացերեն գրությունը Թավրիզ ժամանելու մասին է⁷: Այս երկու հիշատակարաններից հետո հեղինակը թողել է երկու թվականներ՝ 1746 և 1747, որոնք հավանաբար արտացոլում են իր վերոհիշյալ ուղևորությունների ժամանակագրությունը: Ձեռագրի պահպանակի վրա թողնված այս գրությունները համահունչ են այն վրացերեն գրչափորձերի հետ, որոնք կարելի է հանդիպել ձեռագրի տարբեր էջերին: Ըստ երևույթին, XVIII դ. կեսերին ձեռագրից օգտվել ու այս գրությունները թողել է վրացական միջավայրում առևտրական գործունեություն ծավալած հայ վաճառականներից մեկը:

Այսպիսով՝ բոլոր այս դեպքերում գործ ունենք մի երևույթի հետ, երբ վաճառականներն իրենց առևտրական ճամփորդություններն արձանագրում են իրենց ձեռքի տակ եղած մասնագիտական դասագրքերն ամփոփող ձեռագրում: Ինչպես առաջին անգամ դիպուկ կերպով նկատել է Սեպուհ Ասլանյանը, հենց այդ հիշատակարանները ցույց են տալիս, որ վաճառականները ձեռագիրը որպես արժեքավոր ուղեցույց իրենց հետ տարել են բոլոր այն ուղղություններով, որոնք արձանագրել են այդ ձեռագրի դատարկ էջերին⁸: Դա նշանակում է, որ Նոր Չուղայի առևտրական ցանցում վաճառականների շրջանառությունն ուղեկցվել է ձեռնարկ-դասագրքերի շրջանառությամբ, որոնք, ցանցի կենտրոն Նոր Չուղայում կատարելով դասագրքի գործառույթ, ցանցի այլ բնակավայրերում վաճառականների համար հանդես են եկել որպես օգտակար ուղեցույցներ: Հիշատակարանները անփոխարինելի տեղեկություններ են տրամադրում նաև Կոստանդ Չուղայեցու ձեռնարկների շրջանառության ուղղությունները բացահայտելու տեսանկյունից:

¹ Նույն տեղում, թ. 2բ:

² Նույն տեղում, թ. 6ա:

³ Տե՛ս Նույն տեղում, թ. 6ա:

⁴ Նույն տեղում, թ. 251բ:

⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 8443, թ. 137բ:

⁶ Տե՛ս Նույն տեղում, պահպանակ Բ:

⁷ Վրացերեն ու վրացատառ այս հիշատակարանները վերծանելու համար շնորհակալություն ենք հայտնում Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի գիտաշխատող Խաթունա Գափրինդազվիլիին:

⁸ Տե՛ս Aslanian S., նշվ. աշխ., էջ 137:

ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԶԵՌԱՐԿՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՎԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Կոստանդ Ջուղայեցու՝ վաճառականական շրջանակներին հասցեագրված երկերի շրջանառությունը կարելի է փաստագրել նաև այն գրիչների կամ հեղինակների միջոցով, որոնք զանազան վայրերում ընդօրինակել են դրանք կամ որպես աղբյուր օգտագործել իրենց իսկ աշխատություններում: Նրա երկերից օգտված հեղինակներն ամենևին սակավ չեն, ինչը թեև մնացել է ուշադրությունից դուրս, այնուհանդերձ կարևոր եզրակացությունների տեղիք է տալիս ընդհանրապես հայկական վաճառականական գրականության վրա ունեցած ազդեցության առումով:

«Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամիս» ձեռնարկների շարադրանքից 12 տարի անց՝ 1699 թ., Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանում լույս տեսավ Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի» հայտնի գիրքը: Հայ վաճառականությանը՝ «առ հայագուն վաճառասեր եղբարս»¹ հասցեագրված այս երկը գալիս էր պատվավոր տեղ զբաղեցնելու հայ վաճառականական գրականության ժանրում, որի հիմքերը դրել էր Կոստանդ Ջուղայեցին ոչ վաղ անցյալում: Ի՞նչ աղբյուրների վրա էր հիմնված Ղուկաս Վանանդեցու գրքում ներկայացված առևտրական տեղեկատվությունը: Հետաքրքիր է, որ հեղինակն ինքը կարևորել է այդ հարցն ու առաջաբանում արձանագրել. «Ըստ կարի մերում, և ըստ որում՝ ի հարազատ գրեանս եղեալ գտինք, գյետ ևոցա երթալով՝ զնոյնս մեք եւս ի յօգուտ մերազնեայ վաճառասեր եղբարցդ արձանացուցուցուք»²: Ղուկաս Վանանդեցին, փաստորեն, թեև առանց որևէ հեղինակի նշելու, խոստովանել է, որ հիմնվել է «ի հարազատ գրեանս», այսինքն՝ հայկական աղբյուրներում ամփոփված նյութերի վրա: Այն հարցը, թե ումից նա կարող էր օգտված լինել, ուսումնասիրողները վաղուց լուծել են Կոստանդ Ջուղայեցու օգտին³: Իսկապես, այս գիրքն ու Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ը աչքի են ընկնում թեմատիկ ու բովանդակային համանմանությամբ: Այն, որ Ղուկաս Վանանդեցին զգալիորեն օգտվել է Ջուղայեցի հեղինակից, կասկածից դուրս է, սակայն, ինչպես ցույց ենք տվել նախորդ աշխատանքներից մեկում, նա հանդես է բերել ստեղծագործական ինքնուրույնություն՝ փոխառված հատվածների նկատմամբ ցուցաբերելով ընտրողական մոտեցում և իր երկում ներառելով առևտրական մեծաքանակ տեղեկատվություն, որը բացակայում է Կոստանդ Ջուղայեցու դասագրքերում⁴:

Ղուկաս Վանանդեցին միակ հեղինակը չէ, որն իր երկերը շարադրելիս օգտվել է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներից: Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 9284 ձեռագիրը, որն ընդօրինակվել է Աստրախանում 1753 թ., ընդգրկում է միայն մի բնագիր՝ առևտրական խնդիրների ժողովածու, որի հեղինակը Հակոբջանի որդի Ծատուրն է: Աստրախանի ստվարացող հայկական համայնքի ու հատկապես առևտրական խավի համար շարադրված այս երկը կազմված է ներածական հատվածից ու առևտրական խնդիրներ ներառող 20 էջից, որոնցից յուրաքանչյուրը հեղինակն անվանել է «Ֆարդ»: Հատկանշական է, որ Ծատուրի ուշադրությունից չեն վրիպել այդ ժանրի նախորդ երկերը. նա ոչ միայն ծանոթ է եղել Կոստանդ Ջուղայեցու և Ղուկաս Վանանդեցու գրքերին, այլև դրանցից հատվածներ արտագրել իր կազմած ժողովածուում: Այսպես՝ Ծատուրն իր ձեռնարկի տիտղոսաթերթը ձևավորել է «Գանձ չափոյ»-ի ակնհայտ սմանողությամբ՝ չվարանելով կատարել մի քանի անհրաժեշտ փոփոխություններ: Մասնավորապես, հրատարակության վայր Ամստերդամը փոխարինվել է Աստրախանով, 1699 թվականը՝ 1753-ով, իսկ երկի

¹ Ղուկաս Վանանդեցի, *Գանձ չափոյ*, էջ 3:

² Նույն տեղում:

³ Առաջին ուսումնասիրողը, որ կարծիք է հայտնել Կոստանդ Ջուղայեցուց Ղուկաս Վանանդեցու օգտված լինելու մասին, *Լևոն Խաչիկյանն է: Տե՛ս Khachikian L., The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi, "Journal of the Asiatic Society", vol. 8, № 3, 1966, p. 178, idem, Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693), "Annales: Économies, sociétés, civilisations", 22e année, № 2 (mars-avril), 1967, p. 266.*

⁴ Տե՛ս Բաղդարյան Ս., *Նոր Ջուղայի ու Ամստերդամի միջև. վաղ արդի հայկական վաճառականական ձեռնարկների համեմատություն*, «Բանբեր Մատենադարանի», հատ. 27, Ե., 2019, էջ 343-370:

հովանավոր Պետրոս Չուղայեցու անունը՝ հենց իր՝ հեղինակի անվամբ¹: Այնուհետև երկի ներածական մասը կազմելիս Ճատուրն օգտվել է Կոստանդ Չուղայեցու «Աշխարհաժողով»-ից՝ ոչ մեծածավալ հատվածներ արտագրելով դրա տարբեր մասերից²:

Մաշտոցյան Մատենադարանի թիվ 2950 ձեռագրում ընդօրինակված է «Արիքմաթիկայ, այսինքն համարողական արհեստ» բնագիրը: Թվաբանական այս երկի հեղինակը հայտնի չէ, սակայն կիրառված եզրերն, չափական միավորներն ու թվաբանական խնդիրները կապված են արևելահայ առևտրական միջավայրի հետ: Ինչ վերաբերում է ժամանակի հարցին, ապա ժամանակագրական միակ ցուցումը ուսումնական նյութի մեջ որպես օրինակ բերված «թիւ Փրկչին 1738» արտահայտությունն է³, որը, ինչպես նշում է Հակոբ Անասյանը, «եթե գրքի շարադրմանը չի վերաբերում, ապա գոնե ցոյց է տալիս նրա ընդօրինակման ժամանակը»⁴: Ինչպես իրավագիտորեն նկատել է նա, «ներքին տուեալներից երեւում է, որ թարգմանական գործ չէ, այլ ուղղակի հայերեն շարադրուած»... «Արիքմաթիկայ»-ի հեղինակը հայ է: Եւ այդ հայ հեղինակին, որը գրաբարով է խմբագրել իր գիրքը, ապահովաբար ծանօթ են եղել Կոստանդ Չուղայեցու երկերը, ինչպես վկայում են «Արիքմաթիկայ»-ի հիմքում ընկած լեզուական, տերմինային եւ այլ տուեալներ»⁵: Փաստորեն, «Արիքմաթիկայ»-ի անանուն հեղինակը ևս չի շրջանցել հայ վաճառականական գրականության հիմքերը դրած Չուղայեցի դպրապետի աշխատությունները:

Եթե Կոստանդ Չուղայեցուց օգտված վերը նշված երեք հեղինակներն իրենց աշխատություններում արձարծել են առևտրական ինչ-ինչ թեմաներ, ապա տաղարան ընդօրինակած Մինասի որդի Հովհաննես Ազուլեցու օրինակը փոքր-ինչ զարմանալի է: Խոսքը վերաբերում է Մաշտոցյան Մատենադարանի թիվ 3055 ձեռագրին, որում ներկայացված տաղարանը զարմանալիորեն բացվում է վաճառականական խրատներով⁶, որոնք ակնհայտորեն վերցված են «Աշխարհաժողով»-ից: Թե երբ և որտեղ է ընդօրինակվել ձեռագիրը, պարզություն է մտցնում է Հովհաննես Ազուլեցու հիշատակարանի համապատասխան հատվածը՝ «1831 ՌՄՁ թվին, Յունվարի Ի-2-ում (26), ի Գունուկ»⁷: Այս օրինակը հատկանշական է հետևյալ առումով՝ Նոր Չուղայի առևտրական ցանցի անկումից գրեթե դար անց էլ Կոստանդ Չուղայեցու ձեռնարկները չէին կորցրել իրենց հետաքրքրությունը հայ հեղինակների համար:

Կոստանդ Չուղայեցու ձեռնարկներից վերը նշված հեղինակների որոշակի կախվածությունը կարևոր եզրակացությունների ուղի է բացում երկու ուղղությամբ: Նախ՝ այդ երկերը XVII դարավերջին հասել են Ամստերդամ, իսկ Նոր Չուղայի ցանցի անկումից հետո էլ՝ Աստրախան ու Ազուլիս, ինչը կարևոր է դրանց շրջանառությունը փաստագրելու տեսանկյունից: Եվ երկրորդ՝ առևտրական այլ բնագրերի վրա Կոստանդ Չուղայեցու երկերի ազդեցությունը հիշեցնում է վաղ արդի Եվրոպայում դիտված այն երևույթը, երբ վաճառականական լայն շրջանակների համակարանքը վայելող մասնագիտական դասագրքերը դառնում էին չափանիշ ու ընդօրինակման աղբյուր ապագա հեղինակների համար: Այդ առումով լավագույն օրինակն, անկասկած, ֆրանսիացի վաճառական ու հեղինակ ժակ Սավարիի (1622-1690) «Կատարյալ վաճառականը» դասագիրքն է, որն առաջին հրատարակությունից⁸ մինչև 1800 թ. ընկած ժամանակահատվածում ունեցել է ավելի քան 30 հրատարակություն, ներառյալ՝ անգլերեն, հոլանդերեն ու իտալերեն

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 9284, թ. 4ա: Որքան մեզ հայտնի է, Ճատուրի այս երկն առաջին անգամ իր աշխատանքներում օգտագործել է Գեղամ Գևոնյանը: Տե՛ս Kévonian K., *Marchands arméniens au XVIIe siècle: A propos d'un livre arménien publié à Amsterdam en 1699, "Cahiers du Monde Russe et Soviétique"*, № 16, 1975, p. 201.

² Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 9284, թ. 5բ-6ա:

³ Տե՛ս Նույն տեղում, ձեռ. թիվ 2950, թ. 4ա:

⁴ Անասյան Յ., «Հայերեն թուրքական դասագրքերի պատմութեան համար, Ա. «Արհեստ համարողութեան», Բ. «Արիթմետիկայ», «Մանր երկեր», Լուս Անշելես, 1987, էջ 673:

⁵ Նույն տեղում, էջ 673-674:

⁶ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 3055, թ. 2ա-3ա:

⁷ Նույն տեղում, թ. 3բ: Թե որտեղ է պետք տեղորոշել ձեռագրի ընդօրինակված վայր Գունուկը, մեզ չհաջողվեց պարզել:

⁸ Տե՛ս Jacques Savary, *Le parfait négociant ou Instruction générale pour ce qui regarde le commerce des marchandises de France et des pays étrangers*, Paris, 1675. Ժակ Սավարիի առևտրական այս ձեռնարկի մասին մանրամասն տե՛ս Hauser H., *Le 'parfait négociant' de Jacques Savary, "Revue d'histoire économique et sociale"*, 1925, no. 13, pp. 1-28;

թարգմանությունները¹: Ֆրանչեսկա Տրիվելատոյի դիպուկ գնահատականում ակնհայտորեն արտացոլված է Սավարիի ձեռնարկի ունեցած համբավը ողջ Եվրոպայում. «Ժակ Սավարիի «Կատարյալ վաճառականը», որն առաջին անգամ հրատարակվել է 1675 թ., XVII դ. ֆրանսիական առևտրական հասարակության մանիֆեստն էր: Այն նաև վաղ արդի Եվրոպայի ամենից շատ վերահրատարակված, թարգմանված ու ընդօրինակված առևտրական դասագիրքն էր»²: Ինչպես Եվրոպացի հեղինակներն էին փորձում օգտվել Սավարիի ձեռնարկից ու կրկնել նրա հաջողությունը, այնպես էլ հայ հեղինակներն էին հետևում «հայկական Սավարիին»՝ Կոստանդ Ջուղայեցուն, որը վաճառականական գրականության առաջին ամբողջական ու արժեքավոր սմուլների հեղինակն էր հայ իրականության մեջ³:

Հայ ընդօրինակող գրիչները ևս հետաքրքրություն են ցուցաբերել առևտրական երկերի նկատմամբ: «Աշխարհաժողով»-ի ու «Դռներն ռաղամ»-ի վեց ընդօրինակություններից չորսն արվել են Նոր Ջուղայում, մեկի արտագրման տեղը հայտնի չէ, իսկ ինչ վերաբերում է վեցերորդին, ապա այն ընդօրինակվել է «ի քաղաքն մեծին Կոստանինուպոլսին»⁴ 1712 թ.: Եվս մի օրինակ. Մաշտոցյան Մատենադարանի թիվ 8361 ձեռագրում, որն ընդօրինակվել է Շամախիում 1742 թ., կարելի է հանդիպել «Աշխարհաժողով»-ից արտագրված տեքստի՝ ընդամենը մեկ թերթ ծավալով: Ընդ որում, գործ չունենք ամբողջական ընդօրինակությունից պոկված թերթի հետ, քանի որ գրիչ Մարտիրոսը հաջորդաբար արտագրել է այնպիսի հատվածներ, որոնք բնագրում ամենևին իրար չեն հաջորդում: Այսպիսով՝ Կոստանինուպոլսին ու Շամախին ևս պետք է ներառել Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների շրջանառության տիրույթում:

«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ» ՈՒ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՁԵՌՆԱՐԿ-ԴԱՍԱԳՐԵՐԸ

Այժմ տեսնենք, թե ինչի մասին է արդեն իսկ վկայակոչված «շրջանառության տեսությունն» ու ինչպես է այն տեղավորվում Կոստանդ Ջուղայեցու երկերի ուսումնասիրության շրջանակներում: Այսպես, ըստ Կ. Մարկովիցի՝ առևտրական ցանցերը կազմված են կենտրոն(ներ)ից ու դրա հետ փոխկապակցված մի շարք բնակավայրերից, որոնց միջև տեղի է ունենում «առարկաների ու մարդկանց» շրջանառություն⁵: Այդ շարքում են վաճառականները, կանայք, ապրանքները, կապիտալն ու տեղեկատվությունը, որոնց անդադար շրջանառությունն ապահովում է ցանցի ամբողջականությունն ու կայուն գործունեությունը: Պետք է նկատի ունենալ, որ «շրջանառությունը տարբեր է պարզ շարժունությունից, քանի որ այն ենթադրում է առաջ գնալու ու հետ գալու

Hook J., *Le phénomène Savary et l'innovation en matière commerciale en France aux XVIIe et XVIIIe siècles*, Jean-Pierre Kintz (ed.), *Innovations et nouveaux techniques de l'Antiquité à nos jours: Actes du colloque international de Mulhouse (septembre 1987)*, Strasbourg, 1989, pp. 113–123; Coffman D'Maris, *Economic Thought and State Practice in the Atlantic World: The 'Phénomène Savary' in Context*, D'Maris Coffman, Adrian Leonard and William O' Reilly (eds.), *The Atlantic World*, London-New York, 2015, pp. 618-632. Վերջին հոդվածի կապակցությամբ շնորհակալություն եմ հայտնում հեղինակին իր աշխատանքի էլեկտրոնային տարբերակը սիրալիկ կերպով իմ տրամադրության տակ ղնելու համար:

¹ Ժակ Սավարիի դասագրքի՝ 1675-1800 թթ. վերաբերող բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը տե՛ս *Ars Mercatoria: Handbücher und Traktate für den Gebrauch des Kaufmanns, Manuels et traités à l'usage des marchands, 1470-1820*, J. Hoock et P. Jeannin (eds.), *Eine Analytische Bibliographie, Band 2, 1600-1700*, Paderborn, 1993, pp. 488-497.

² Trivellato F., *The Promise and Perils of Credit: What a Forgotten Legend about Jews and Finance Tells us about the Making of European Commercial Society*, Princeton, 2019, p. 99.

³ Հմմտ. Բալդարյան Ս., *Նոր Ջուղայի ու Ամստերդամի միջև*, էջ 365-367:

⁴ Օբսիդորդի Բողոքյան գրադարան, *հայ. ձեռ. թիվ f 15, թ. 109բ-110ա: Օբսիդորդում մեր հետապոստությունները հնարավոր դարձնելու ու գիտական դրամաշնորհի հատկացնելու համար շնորհակալություն ենք հայտնում Հայագիտական հետապոստությունների ասոցիացիային ընկերակցությամբ (National Association for Armenian Studies and Research):*

⁵ Տե՛ս Markovits C., *ևշվ. աշխ.*, էջ 25:

կրկնակի շարժում, որը կարող է կրկնվել անվերջ»¹: Ս. Ասլանյանը, բացի այդ, հայկական առևտրական ցանցը բնորոշում է նաև վեցերորդ տարրով՝ քահանաների շրջանառությամբ²:

Շրջանառվող «առարկաներն ու մարդիկ» միևնույն կարևորությունը չունեին առևտրական ցանցերի համար: Ինչպես եզրակացնում է Կլոդ Մարկովիցը, «ամենաեականը հավանաբար տեղեկատվության շրջանառությունն է... [քանի որ] ամենահաջողակ առևտրական ցանցերը եղել են նրանք, որոնք ամենից ընդունակն էին տեղեկատվությունը շարունակական մշակման ենթակա գիտելիքի փոխակերպելու հարցում»³: Այս գնահատականը լիովին արտացոլում է առևտրական շուկաների վերաբերյալ թարմ տեղեկատվություն ունենալու անհրաժեշտությունն ու մտահոգությունը, որը դարձել էր վաճառականի կյանքի անբաժան մասը: Առևտրական գործարքների հաջողությունը կամ ձախողումը մեծապես կախված էին հենց տեղեկատվության այն պաշարից, որ իր ձեռքի տակ ուներ տվյալ վաճառականը: Տեղին է հիշել նաև ֆրանսիացի նշանավոր պատմաբան Ֆեռնան Բրոդելի դասական ձևակերպումը առևտրական լուրերի մասին՝ «նորությունը՝ շքեղ ապրանք»⁴:

Ինչպե՞ս էր շրջանառվում առևտրական ցանցերի համար այդքան կարևոր տեղեկատվությունը հայ վաճառականների միջավայրում: Ինչպես Սեպուհ Ասլանյանի ուսումնասիրությունն է ցույց տալիս, գլխավոր եղանակը, որով հայ վաճառականները փոխանակել են «առևտրի գաղտնիքները», նամակագրությունն էր⁵: Ընդ որում, հենց իրենք՝ վաճառականներն էլ ժամանակին փորձել են արժևորել նամակները: Այսպես՝ 1711 թ. Նոր Ջուղայում բնակվող Շահրիմանյան ընտանիքի ներկայացուցիչներից մեկը նամակ է ուղարկում Լիվոռնո՝ իր տոհմակից Պետրոսին և գանգատվում, որ վերջինիս նախորդ նամակում «ոչ առքի խաբար կայ, ոչ ծախսի»: Ակնկալելով ստանալ իրենց ընտանիքի առևտրական գործարքներին վերաբերող նորություններ՝ նամակագիրը հատուկ ընդգծում է. «Սովորագրին գրին աղն առքն եւ ծախսն այ»⁶: Ս. Ասլանյանը նաև նկատել է, որ հայկական առևտրական նամակներում հաճախ չեն հանդիպում չափի, կշռի, դրամի միավորների մասին տվյալներ, քանի որ այդպիսիք արդեն կարելի էր գտնել հատուկ մասնագիտական գրքերում:

Ինչպես արդեն տեսանք, Կոստանդ Ջուղայեցու երկերը լայնորեն շրջանառվել են Նոր Ջուղայի առևտրական ցանցում ու դրանից դուրս: Դրանք որպես գրպանի ուղեցույց հայ վաճառականների կողմից տարվել են տարբեր ուղղություններով՝ Սուրաթ, Եվրոպա, Թիֆլիս, Թավրիզ, Իրանի տարածքում Մաշհադ ու Շիրազ: Հայ հեղինակներն ու գրիչներն էլ օգտվել կամ ընդօրինակել են այս երկերը զանազան վայրերում՝ Ամստերդամ, Աստրախան, Ագուլիս, Կոստանդնուպոլիս ու Շամախի, ընդ որում՝ նույնիսկ Նոր Ջուղայի առևտրական ազդեցիկ դիրքերի փլուզումից շատ տասնամյակներ անց: Բոլոր այս փաստերը վկայում են այն մասին, որ Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկները լայնորեն շրջանառվել են Նոր Ջուղայի ցանցում ու իրենց որոշակի դերն են ունեցել «ամենաթանկ ապրանքի»⁷, այն է՝ տեղեկատվության փոխանցման ասպարեզում: Իհարկե, այդ դերն անհամեմատելիորեն ավելի նվազ էր, քան նամակագրության խաղացած դերակատարությունը, այնուհանդերձ դա էլ բավական է հայկական առևտրական ձեռնարկները տեղեկատվության շրջանառության եղանակների շարքում ներառելու համար: Այսպիսով՝ նամակագրությունը և ձեռնարկ-դասագրքերը, տարբեր հարաբերակցությամբ, այն երկու առանցքներն էին, որոնց շուրջ կայանում էր տեղեկատվության շրջանառության համակարգը Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում մի դարաշրջանում, երբ «լավ տեղեկացված լինելը նույնիսկ ավելի կարևոր էր, քան լավ կրթված լինելը»⁸:

¹ Markovits C., Pouchepadass J. and Subrahmanyam S., Introduction., *Society and Circulation: Mobile People and Itinerant Cultures in South Asia 1750–1950*, edited by Markovits C., Pouchepadass J. and Subrahmanyam S., Delhi, 2003, pp. 2-3.

² St' u Aslanian S., *Աշխ.*, էջ 13, 55:

³ Markovits C., *Աշխ.*, էջ 25:

⁴ Braudel F., *The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II*, vol. 1, New York, 1972, p. 335.

⁵ St' u Aslanian S., *Աշխ.*, էջ 86-120:

⁶ Archivio di Stato di Venezia, Documenti Armeni, busta 2. Հմմտ. տե՛ս Aslanian S., op. cit., p. 99.

⁷ Markovits C., *Աշխ.*, էջ 82, 219:

⁸ Braudel F., *Civilization and Capitalism, 15th-18th Century*, vol. 2: *The Wheels of Commerce*, New York, 1983, p. 409.

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1778 թ. Լիվոռնո քաղաքում բնակվող հրեա վաճառական Դավիթ Աթիասը, իսպանահրեական լադինո լեզվով շարադրելով «Ոսկե պարտեզը» գիրքը, բողոքում էր, որ հրեաները, ի թիվս գրականության այլ ժանրերի, չունեն «առևտրական դասագրքեր իրենց առօրյա լեզվով»¹: Դրանից մոտ 100 տարի առաջ Նոր Ջուլայից սերող հայ վաճառականներն արդեն հնարավորություն ունեին օգտվելու առևտրական-մասնագիտական գրականությունից, որի առաջին նմուշները՝ «Արիեստ համարողութեան», «Աշխարհաժողով» ու «Դռներն ռաղամիս» խորագրերով, հեղինակել էր Ս. Ամենափրկիչ վանքում անցկացվող իր առևտրական դասընթացով հայտնի Կոստանո Ջուլայեցին: Դրանք գրված էին ջուլայեցի վաճառականների խոսակցական լեզվով՝ Նոր Ջուլայի բարբառով, մի հատկանիշ, որը կարևորում էր Դավիթ Աթիասը իր ազգակից հրեա վաճառականների դեպքում:

Այս ուսումնասիրությամբ ի մի բերված փաստերը ցույց են տալիս, որ Կոստանո Ջուլայեցու ձեռնարկների ձեռագիր օրինակները լայնորեն շրջանառվել են ինչպես Նոր Ջուլայի առևտրական ցանցի ներսում, այնպես էլ դրա անկումից հետո: Իրենց գործնական ուղևորությունների ժամանակ վաճառականներն այս ձեռնարկներն օգտագործել են որպես առևտրական տեղեկատվության արժեքավոր ուղեցույցներ: Մյուս կողմից՝ հայ հեղինակները, որոնք նախաձեռնել են առևտրական երկրի շարադրանք, հաճախակի օգտվել են Կոստանո Ջուլայեցու ձեռնարկներից՝ ամբողջական հատվածներ ընդօրինակելով իրենց երկերում: Առևտրական ցանցի կենտրոն Նոր Ջուլայում դասագրքի գործառույթ ունեցող այս ձեռնարկները, փաստորեն, ցանցի այլ մասերում հայ վաճառականների համար հանդիսացել են ուղեցույցներ, իսկ հայ հեղինակների համար եղել են ընդօրինակման աղբյուրներ: Դրանց շրջանառության մասին մեր ունեցած տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ առևտրական ձեռնարկներն իրենց ուրույն դերն են ունեցել ջուլայեցիների տեղեկատվական հոսքերում՝ տեղեկատվության փոխանցման գլխավոր միջոցի դերակատարությունն, իհարկե, թողնելով նամակագրությանը:

Саркис Балдарян, ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ. Цель статьи - пролить свет на то, как армянские коммерческие учебники распространялись в глобальной торговой сети Новой Джульфы, при этом особое внимание обращается на “Компендиум” и “Введение в арифметику”, написанные Константином Джугаеци в 1687 году. Многие заметки, написанные армянскими купцами на разных страницах рукописей учебников, помогают уточнить границы их распространения. Еще одним свидетельством является заметное влияние “Компендиума” Константа Джугаеци на другие армянские коммерческие справочники.

Опираясь на тщательное изучение более пятнадцати армянских рукописей, хранящихся в Ереване, Новой Джульфе и Оксфорде, исследование показывает, что в торговой сети Новой Джульфы постоянно происходила циркуляция коммерческой литературы, и «Компендиум» и другие учебники были важными способами распространения коммерческой информации.

Ключевые слова: *Констант Джугаеци, коммерческий учебник, Новая Джульфа, “теория циркуляции”, торговая сеть, Егия Карнеци, Гукас Ванандеци, Амстердам.*

Sargis Baldaryan, THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA. The essay aims to shed light on how Armenian commercial handbooks circulated in the global trade network of New Julfa with a special focus on *The Compendium* and *Introduction to Arithmetic* written by Constant of Julfa in 1687. The profusion of notes scribbled by merchants on different pages of the manuscript copies of these manuals helps us to gain a good understanding of the destinations these manuals reached.

¹ Bunis D., Chetrit J., Sahim H., *The Jews in the Middle East and North Africa in Modern Times*, edited by Reeva Spector Simon, Michael Menachem Laskier, and Sara Reguer, New York, 2002, pp. 119-120.

Another indication of the circulation is the remarkable influence of *The Compendium* on early modern Armenian commercial handbooks.

Relying on a careful examination of over fifteen Armenian manuscripts stored in Yerevan, New Julfa, and Oxford, the study shows that there was a constant circulation of commercial literature within the Julfan trade network, and *The Compendium* and other merchant manuals were an important way of disseminating commercial information along with business correspondence.

Key words: *Constant of Julfa, commercial handbook, New Julfa, “circulation theory”, trade network, Yeghia of Karin, Ghukas of Vanand, Amsterdam.*